# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1012

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՉԱՋՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.16177 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել Զավեն Միշայի Մնացականյանը՝ ծնված 02.02.1963 թ., Ասյա Հրաչիկի Մնացականյանը՝ ծնված 15.03.1966 թ., Սարգիս Զավենի Մնացականյանը՝ ծնված 26.09.1989 թ., Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի վարչական սահմաններում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասի հիմքերի վերականգնման խնդրանքով: Հողամասի օրինական մակերեսը, ըստ Աչաջուր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 07.03.1991թ. թիվ 3 որոշման կազմում է 0.162 հա /ծածկագիր 11-013-0129-0002/, չափագրությունից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.16177 հա, ուստի դիմել է օրինական 0.16177 հա մակերեսով հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 22.1 կետի, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1 Վերականգնել քաղաքացիներ Զավեն Միշայի Մնացականյանի, Ասյա Հրաչիկի Մնացականյանի, Սարգիս Զավենի Մնացականյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, 0.16177 հա հողամասի նկատմամբ /ծածկագիր 11-013-0129-0002/ և օրենքի ուժով համարել քաղաքացիների սեփականությունը:

3.Քաղաքացիներ Զավեն Միշայի Մնացականյանին, Ասյա Հրաչիկի Մնացականյանին, Սարգիս Զավենի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.16177 հա մակերես հողամասին /ծածկագիր 11-013-0129-0002/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աչաջուր 37-րդ փողոց, թիվ 10 հողամաս:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1013

## 07.08.2025թ. ԹԻՎ 976 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 07.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 976 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 07.08.2025թ. թիվ 976 որոշումը կարդալ.

<<ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԽԱՇԹԱՌԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.22530ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-035-0043-0047/ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ , ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Արմեն Շամիրի Դանիելյանը, ծնված՝ 26.01.1956թ., Արսեն Արմենի Դանիելյանը ծնված՝ 28.09.1979թ., Ասյա Արմենի Դանիելյանը ծնված՝ 22.10.1980թ., Արտակ Արմենի Դանիելյանը ծնված՝ 21.04.1982թ. և Անահիտ Արմենի Դանիելյանը ծնված՝ 29.10.1984թ. որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի քաղվածքի ձեռք են բերել բնակելի տուն՝ իր հողամասով: Բնակելի տան և հողամասի օրինական մակերեսը 0.14հա է, սակայն չափագրումից պարզվել է, որ հողամասի /ծածկագիր 11-035-0043-0047/ փաստացի մակերեսը կազմում է 0.22530հա, որի վրա առկա է 1990թ. կառուցված 293.9քմ մակերեսով բնակելի տուն: Ուստի դիմել է օրինական 0.14հա և սահմանազատված, չկառուցապարված 0.0853հա մակերեսով հողամասի և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 293.9քմ մակերեսով բնակելի տան իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով / ծածկագիր 11-035-0043-0047/:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինական 0.14հա և սահմանազատված, չկառուցապարված 0.0853հա մակերեսով հողամասը և 293.9քմ ներքին մակերեսով բնակելի տունը, կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին'' ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել 11-035-0043-0047 ծածկագրով 0.22530հա մակերեսով հեղամասի սահմանները ըստ ներկայացված հատակագծի:

2. Վերականգնել քաղաքացիներ Արմեն Շամիրի Դանիելյանի, Արսեն Արմենի Դանիելյանի, Ասյա Արմենի Դանիելյանի, Արտակ Արմենի Դանիելյանի և Անահիտ Արմենի Դանիելյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.22530հա մակերեսով հողամասի և 293.9քմ

մրեսով բնակելի տան նկատմամբ /ծածկագիր 11-035-0043-0047/ և օրենքի ուժով համարել քաղաքացիների փականությունը:

3. Քաղաքացիներ Արմեն Շամիրի Դանիելյանին, Արսեն Արմենի Դանիելյանին, Ասյա Արմենի Դանիելյանին, Արտակ Արմենի Դանիելյանին և Անահիտ Արմենի Դանիելյանին, պատկանող 0.22530հա մակերես հողամասով /ծածկագիր 11-035-0043-0047/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 7-րդ փողոց, 20 բնակելի տուն:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:>>

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1014

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 31.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳԱՌՆԻԿ ՍԵՐՈԺԻ ՉԻԲՈՒԽՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 31.4 ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, հասցեում գտնվող համայնքային սեփականություն Անկախության փողոց, թիվ 19/6 հանդիսացող 31.4քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի՝ Գառնիկ Սերոժի Չիբուխչյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 31.4քմ արտաքին մակերեսով ավտոտնակի շինությունը, որի ներքին մակերեսը կազմում է 28.4 քմ՝ ճանաչվել է օրինական համայնքային սեփականություն /վկայական թիվ24072025-11-0043/: Անհրաժեշտություն է առաջացել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող 31.4քմ արտաքին մակերեսով ինքնակամ ավտոտնակի շինությունն, իր զբաղեցրած 31.4քմ մակերես հողամասով վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի՝ Գառնիկ Սերոժի Չիբուխչյանին: Ավտոտնակի շինության զբաղեցրած 31. 4քմ մակերեսով հողամասը և3 1.4քմ մակերեսով ավտոտնակի շինությունը չեն խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՛ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոնշյալը և քաղաքաշինական խորհրդի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի, թիվ 33.1 կետի բ/ ենթակետի, թիվ 33.2 կետի և թիվ 35 կետի բ/ ենթակետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի Գառնիկ Սերոժի Չիբուխչյանին /11.08.2025թ., դիմում թիվ3124/ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Անկախության փողոց, թիվ 19/6 հասցեում գտնվող 31.4քմ մակերեսով հողամասը՝ 1քմ 6834.3 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 214597 /երկու հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 31.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ 1քմ 2316 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 72722 /յոթանասուներկու հազար յոթ հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1015

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆՈՔԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.206ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Միեր Համլետի Ճաղարյանը Տավուշի մարզի, Ենոքավան բնակավայրի վարչական սահմաններում սեփականության իրավունքով իրենց պատկանող /ծածկագիր 11-028-0005-0008/ 0.206հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին հասցեավորում տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի Ենոքավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.206հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-028-0005-0008/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Ենոքավան 9-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 4 հողամաս:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1016

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՍԵՎՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.128 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-058-0057-0010ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Վոլոդյա Հարությունի Հարությունյանը, Տավուշի մարզ Իջևան համայնք Սևքար գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.128 հա մակերեսով հողամասին և բնակելի տանը հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-058 -0057-0010, վկայական 2171861/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Վոլոդյա Հարությունյանին պատկանող 0.128հա մակերեսով հողամասին և բնակելի տանը /ծածկագիր 11-058-0057-0010/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար գյուղ, 5-րդ փողոց, 6 բնակելի տուն :

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1017

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՍԵՎՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.2605ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-058-0049-0011/ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ , ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Լադիկ Սարգսի Քոչարյանը՝ ծնված 15.05.1942թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար բնակավայրի վարչական սահմաններում ըստ օրենքի ժառանգության իրավունքով ձեռք է բերել բնակելի տուն իր հողամասով:Բնակելի տան զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը, ըստ Սևքար բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 03.03.1991թ. թիվ 2 որոշման գրանցված է 0.23հա հողամաս /ծածկագիր 11-058-0049-0011/, չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.2605հա, որի վրա առկա է 1982-1983թ.թ. կառուցված 347.2քմ նակերեսով բնակելի տուն: Ուստի դիմել է մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.23հա մակերեսով և 0.0305հա մակերեսով սահմանազատված, չկառուցապատված հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 1982-1983թ.թ. կառուցված 347.2քմ ներքին մակերեսով բնակելի տան իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-058-0049-0011/:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.2605հա մակերեսով հողամասը և 347.2քմ ներքին մակերեսով բնակելի տունը, կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին'' ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 22.1 կետի, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել 11-058-0049-0011 ծածկագրով 0.2605հա մակերեսով հողամասի սահմանները ըստ ներկայացված հատակագծի:

2.Վերականգնել քաղաքացի Լադիկ Սարգսի Քոչարյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող օրինական 0.23հա մակերեսով և 0.0305հա մակերեսով սահմանազատված, չկառուցապատված հողամասի և ընդհանուր 347.2քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ /ծածկագիր 11-058-0049-0011/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

3.Քաղաքացի Լադիկ Սարգսի Քոչարյան պատկանող 0.2605հա մակերես հողամասով /ծածկագիր 11-058-0049-0011/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Սևքար 3-րդ փողոց, թիվ 8 բնակելի տուն:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1018

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-022-0033-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Կարինե Գաբրիելյանը, Տավուշի մարզի, Իջևան համայնքի Գետահովիտ բնակավայրի վարչական սահմաններում և սեփականության իրավունքով իրեն պատկանող /ծածկագիր 11-022-0033-( 6, վկայական՝ 11082025-11-0013/ հողամասին և բնակելի տանը հասցեավորում տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Գետահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող /ծածկագիր 11-022-0033-0006, վկայական՝ 11082025-11-0013/ հողամասին և բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Գետահովիտ 11-րդ փողոց, 18 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**

ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1019

## 07.08.2025թ. ԹԻՎ 976 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 25.07.2025թ. համայնքի ղեկավար թիվ 927 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 25.07.2025թ. թիվ 927 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.298 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-009-0108-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Բագրատ Չոբանյանը, Տավուշի մարզ Իջևան համայնք Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.298հա մակերեսով հողամասին և բնակելի տանը հասցեավորում տալու խնդրանքով / ծածկագիր 11-009 -0108-0008, վկայական թիվ 2521613/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Բագրատ Չոբանյանին պատկանող 0.298հա մակերեսով հողամասին և բնակելի տանը / ծածկագիր 11-009 -0108-0008, վկայական թիվ 2521613/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղ, 1-ին փողոց, 7-րդ փակուղի, 1 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:,,

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1020

## 13.02.2013Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 4Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻ

13.02.2013թ. համայնքի ղեկավարի թիվ 4Ա որոշման մեջ առաջացել է անճշտություն, ուստի անհրաժեշտությունն առաջացել որոշումն անվավեր ճանաչել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-ր հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 13.02.2013թ. Իջևան համայնքի ղեկավարի թիվ 4Ա որոշումը ճանաչել անվավեր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1021

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.16591ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-035-0084-0009 ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Ռուսլան Գրիշայի Հակոբյանը իրենց պատկանող, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.16591հա մակերեսով հողամասին հասցեավորում տրամադրելու խնդրանքով /ծածկագիր 11-035-0084-0009/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.16591հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-035-0084-0009/ տալ հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 5-րդ փողոց, 16/1 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1022

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.102ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Կարեն Օհանյանը իրենց պատկանող, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.102հա մակերեսով հողամասին և բնակելի տանը հասցեավորում տրամադրելու խնդրանքով /ծածկագիր 11-035-0060-0003, վկայական՝ 1603918/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.102հա մակերեսով հողամասին և բնակելի տանը /ծածկագիր 11-035-0060-0003, վկայական՝ 1603918/ տալ հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 16-րդ փողոց, 11 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1023

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՅԳԵՀՈՎԻՏ 30-ՐԴ ՓՈՂՈՑ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.17947ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 30-րդ փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող 0.17947հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0069-0017/ համապատասխանաբար առանձնացնել 0.11033հա մակերեսով և 0.06914հա մակերեսով անշարժ գույքեր և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 30-րդ փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող 0.17947հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0069-0017/ համապատասխանաբար առանձնացված 0.11033հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ 30-րդ փողոց 4 բնակելի տուն:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Այգեհովիտ 30-րդ փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող 0.17947հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-009-0069-0017/ համապատասխանաբար առանձնացված 0.06914հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ 30-րդ փողոց 4/1 հողամաս:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1024

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ՍԵՎՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.20100 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-058-0110-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Սեյրան Սարիբեկյանը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.20100 հա մակերեսով հողամասին հասցեավորում տալու խնդրանքով / ծածկագիր 11-058 -0110-0005/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքար գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Սեյրան Սարիբեկյանին պատկանող 0.20100 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-058-0110-0005/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Սևքար, 8-րդ փողոց, 2-րդ փակուղի, 2 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1025

### ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑ 75/16 ԵՎ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑ 75/16Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել Իջևան համայնքի Իջևան քաղաքի Բլբուլյան փողոց 75/16 բնակարան հասցեում գտնվող /վկայական թիվ 2219310/ և Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոց 75/16ա բնակարան հասցեում գտնվող /վկայական թիվ 2219307/ երկու առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին հասցեավորում տալու:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոց 75/16 բնակարան հասցեում գտնվող /վկայական թիվ 2219310/ և Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոց 75/16ա բնակարան հասցեում /վկայական թիվ 2219307/ գտնվող երկու առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան Բլբուլյան փողոց 75/16 բնակարան:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1026

## 16.07.2025թ. ԹԻՎ 876 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 16.07.2025թ. համայնքի ղեկավար թիվ 876 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 16.07.2025թ. համայնքի ղեկավար թիվ 876 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 0.00148 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում քաղաքաշինական նպատակով առանձնացվել է 0.00148 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 15.02.2005թ. թիվ 2402-Ն որոշման, նշված 0.00148 հա մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 11-005-0014-0001/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.00148 հա մակերեսով հողամասի գործառնական նշաննակությունը և տալ հասցեավորում: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 20,04,2006թ, թիվ 727-Ն որոշման և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.[illegible]ևան համայնքի Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, 0.00148 հա մակերեսով հողամասը / ծածկագիր 11-005-0014-0001/ դասել բնակավայրերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասերի շարքին:

2.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում առանձնացնել 0.00148 հա մակերեսով հողամաս /ծածկագիր 11-005-0014-0001/, համաձայն հաստատված հատակագծի:

3.Տավուշի մարզի Իջևան համայնքի Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.00148 հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք, գյուղ Ազատամուտ, 1-ին փողոց, թիվ 17/4:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1027

## 08.08.2025թ. ԹԻՎ 987 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 08.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 987 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 08.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 987 որոշումը կարդալ.

,,ՄԱՐԶ ՏԱՎՈՒՇ, ՀԱՄԱՅՆՔ ԻՋԵՎԱՆ, ԳՅՈՒՂ ԳԵՏԱՀՈՎԻՏ 17-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արմենուհի Հրանտի Զարգարյանը, իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ գյուղի 17-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեի հողամասի հատակագիծը հաստատելու խնդրանքով: Միաժամանակ կառուցապատողի կողմից նշվել է, որ հողամասում իրականացրել է անհատական բնակելի տան փակ ներբակային տարածքի բարեկարգման աշխատանքներ և կառուցվել է 490.1քմ մակերեսով ծածկ, որը համարվում է ՀՀ կառավարության 29.03.2015թ N596-Ն որոշման N 4 հավելվածի ցանկ N1-ի 8-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված և շինարարության թույլտվություն չպահանջող ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) բարեկարգման աշխատանքներ: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենքի և 29.03.2015թ N596-Ն որոշման N 4 հավելվածի ցանկ N1-ի 8-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1[illegible]նաչել օրինական Արմենուհի Հրանտի Զարգարյանի կողմից՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ գյուղի 17-րդ փողոց 1-ին նրբանցք 4 հասցեում գտնվող 0.109հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում, բնակելի տան փակ ներբակային տարածքում կառուցված 490.1քմ մակերեսով ծածկը, քանի որ այն համարվում է շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներ:

2. Հաստատել սեփականատիրոջ կողմից ներկայացված հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշումը ենթակա է իրավունքի պետական գրանցման:,,

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1028

## 11.08.2025թ. ԹԻՎ 994 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 11.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 994 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 11.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 994 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳԱՆՁԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.01332ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Արարատ Թելմանի Ղուշչյանը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Գանձաքար բնակավայրի վարչական սահմաններում ժառանգության իրավունքով իր սեփականություն հանդիսացող անասնաշենքի՝ իր հողամասով, հասցեավորում տալու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Գանձաքար բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.01332հա մակերես հողամասով անասնաշենքին /ծածկագիր 11-021-0107-0008/ տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, համայնք Իջևան, Գանձաքար 18-րդ փողոց 16 անասնաշենք:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1029

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԻՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.276 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացիներ Արշակ Մարությանը, Անուշ Մովսիսյանը, Վաչե Մարությանը և Մարինե Մարությանը Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.276 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը հասցեավորում տալու խնդրանքով / վկայական 387970,կադաստրային ծածկագիր 11-026-0013-0005/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացիներ Արշակ Մարությանին, Անուշ Մովսիսյանին, Վաչե Մարությանին և Մարինե Մարությանին պատկանող 0.276 հա մակերեսով հողամասին և բնակելի տանը/ վկայական 387970, կադաստրային ծածկագիր 11-026-0013-0005/ տալ հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Դիտավան 1-ին փողոց, 17 տուն :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1030

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԻՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.207 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արշակ Մարությանը Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.207 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին հասցեավորում տալու խնդրանքով / վկայական 1614614,կադաստրային ծածկագիր 11-026-0016-0012/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Արշակ Մարությանին պատկանող 0.207 հա մակերեսով հողամասին / վկայական 1614614, կադաստրային ծածկագիր 11-026-0016-0012/ տալ հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Դիտավան 5-րդ փողոց, 30 հողամաս:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ**
**Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ**

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1031

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԻՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.048 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արշակ Մարությանը Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.048 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը հասցեավորում տալու խնդրանքով / վկայական 1614678,կադաստրային ծածկագիր 11-026-0017-0018/:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Տավուշի մարզ Իջևան համայնք Դիտավան գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Արշակ Մարությանին պատկանող 0.048 հա մակերեսով հողամասին և բնակելի տանը/ վկայական 1614678, կադաստրային ծածկագիր 11-026-0017-0018/ տալ հետևյալ հասցեավորումը. ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Դիտավան 1-ին փողոց, 2-րդ փկղ. 3 տուն :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1032

## 07.08.2025թ. ԹԻՎ 978 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 07.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 978 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

,,1.Իջևան համայնքի ղեկավարի 07.08.2025թ. համայնքի ղեկավար թիվ 978 որոշումը կարդալ.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 57 ՀԱՍՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.05722ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Սուրեն Սարգսի Խաչատրյանը՝ ծնված 10.02.1987թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան Մյասնիկյան 57 հասցեում տեխնիկական անձնագրով ձեռք է բերել 0.05հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս իր բնակելի տնով, սակայն չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.05722հա, որի վրա առկա է 1958-1997թթ. կառուցած 169.8քմ մակերեսով բնակելի տուն: Ուստի դիմել է հողամասի և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված փաստացի 0.05722հա մակերեսով հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 169.8քմ ներքին մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-001-0151-0052/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.05722հա մակերեսով հողամասի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և 169.8քմ ներքին մակերեսով բնակելի տունը կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների , ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման թիվ 22.1 կետի,, և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 64-րդ հոդվածի, 8-րդ կետի, 1-ին ենթակետի, 16-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել քաղաքացի Սուրեն Սարգսի Խաչատրյանի, սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան Մյասնիկյան 57 հասցեում գտնվող 0.05722հա հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված ընդհանուր 169.8քմ մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ /ծածկագիր 11-001-00151-0052/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1033

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ, ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՅԻ ԹԻՎ 82/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 28.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 28.0ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, հասցեում գտնվող համայնքային սեփականություն Բլբուլյան փողոց, թիվ82/4 հանդիսացող 28.0քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի՝ Արուսյակ Սամվելի Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 28.0քմ արտաքին մակերեսով ավտոտնակի շինությունը, որի ներքին մակերեսը կազմում է 25.83 քմ՝ ճանաչվել է օրինական համայնքային սեփականություն /վկայական թիվ12082025-11-0027/: Անհրաժեշտություն է առաջացել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող 28.0քմ արտաքին մակերեսով ինքնակամ ավտոտնակի շինությունն, իր զբաղեցրած 28.0քմ մակերես հողամասով վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի՝ Արուսյակ Սամվելի Հովհաննիսյանին: Ավտոտնակի շինության զբաղեցրած 28.0 քմ մակերեսով հողամասը և 28.0 քմ մակերեսով ավտոտնակի շինությունը չեն խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՜ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոնշյալը և քաղաքաշինական խորհրդի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի, թիվ 33.1 կետի բ/ ենթակետի, թիվ 33.2 կետի և թիվ 35 կետի բ/ ենթակետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի Արուսյակ Սամվելի Հովհաննիսյանին /20.08.2025թ., դիմում թիվ3240/ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Բլբուլյան փողոց, թիվ82/4 հասցեում գտնվող 28.0քմ մակերեսով հողամասը՝ 1քմ 4441.8 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 124370 /մեկ հարյուր քսանչորս հազար երեք հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 28. 0քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ 1քմ 1969 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 55132 /հիսունհինգ հազար հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1034

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0228-0045 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.05 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում անձնացվել է 0.05հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված հողամասը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0228-0045/:Անհրաժեշտություն է առաջացել առանձնացված 0.05հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում, առանձնացնել Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.05 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

2.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում առանձնացված 0.05 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-001-0228-0045/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան ղագործների փողոց, թիվ 40/1:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ**
**Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ**

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1035

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Գ. ԱՉԱՋՈՒՐ, 46-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել, Արարատ Արամայիսի Մանուչարյանին, Գայանե Խորենի Մանուչարյանին, Արսեն Արարատի Մանուչարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Տավուշի մարզի Իջևան համայնք, գ. Աչաջուր, 46 փողոց թիվ 41 հասցեում /վկայական թիվ 03032025-11-0078, ծածկագիր 11-013-0053-0002/ գտնվող անշարժ գույքը բաժանել և տալ նոր հասցեավորում:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի գ. Աչաջուր, 46-րդ փողոց թիվ 41 /վկայական թիվ 03032025-11-0078, ծածկագիր 11-013-0053-0002,/ հասցեում գտնվող, 0.16785 հա հողամասով անշարժ գույքից առանձնացված 0.0917 հա հողամասով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Աչաջուր, 46-րդ փողոց, թիվ 41 բնակելի տուն:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի գ. Աչաջուր, 46-րդ փողոց թիվ 41 /վկայական թիվ 03032025-11-0078, ծածկագիր 11-001-0053-0002,/ հասցեում գտնվող, 0.16785 հա հողամասով անշարժ գույքից առանձնացված 0.07615 հա հողամասով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Աչաջուր, 46-րդ փողոց 41/1 հողամաս:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1036

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ԻՋԵՎԱՆ, ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Աիդա Դավթյանը և Իրինա Սահակյանը, որ սեփականության իրավունքով իրենց պատկանող Տավուշի մարզի Իջևան համայնք, ք. Իջևան, Սպանդարյան փողոց, 2-րդ նրբանցք, 13 հասցեում /ծածկագիր 11-001-0165-0031; 0032/ գտնվող անշարժ գույքը բաժանել և տալ նոր հասցեավորում:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի ք. Իջևան,Սպանդարյան փողոց, 2-րդ նրբանցք, 13 հասցեում /ծածկագիր 11-001-0165-0031; 0032/ հասցեում գտնվող, 0.07102հա հողամասով անշարժ գույքից առանձնացված Աիդա Դավթյանին պատկանող 0.05083հա հողամասով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, ք. Իջևան, Սպանդարյան փողոց, 2-րդ նրբանցք, 13 բնակելի տուն:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի ք. Իջևան, Սպանդարյան փողոց, 2-րդ նրբանցք, 13 /ծածկագիր 11-001-0165-0031;0032/ հասցեում գտնվող, 0.07102հա հողամասով անշարժ գույքից առանձնացվածԻրինա Սահակյանին պատկանող 0.02019հա հողամասով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, ք. Իջևան, Սպանդարյան փողոց, 2-րդ նրբանցք, 13/1 բնակելի տուն:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1037

## ՄԱՐԶ ՏԱՎՈՒՇ, ՀԱՄԱՅՆՔ ԻՋԵՎԱՆ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՓՈՂՈՑ 2/49 ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՓՈՂՈՑ 2/5 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել սեփականության իրավունքով ,,ԻՋԵՎԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ''ՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ,, ՓԲԸ-ին պատկանող Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի Արցախյան փողոց 2/49 հասցեի /վկայական թիվ 20052020-11-0019/ և Իջևան քաղաքի Արցախյան փողոց 2/5 հողամաս հասցեի / վկայական թիվ 15082025-11-0004/ հասցեներում գտնվող առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին հասցե տալու մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 97-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով''

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սեփականության իրավունքով ,,ԻՋԵՎԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ,, ՓԲԸ-ին պատկանող Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի Արցախյան փողոց 2/49 հասցեի /վկայական թիվ 20052020-11-0019/ և Իջևան քաղաքի Արցախյան փողոց 2/5 հողամաս հասցեի /վկայական թիվ 15082025-11-0004/ հասցեներում գտնվող առանձին գույքային միավորների միավորումից առաջացած գույքին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Արցախյան փողոց 2/49 հողամաս:

2..Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 1038

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, 11-022-0009-0050 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, 0.02079 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Գետահովիտ գյուղի վարչական սահմաններում, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացվել է 0.02079 հա մակերեսով հողամաս: Համաձայն Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ գյուղը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի,, նշված 0.02079 հա մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-022-0009-0050/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.02079 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան համայնքի Գետահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, 0.02079 հա մակերեսով հողամասը դասել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքին:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ գյուղի վարչական սահմաններում՝ բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.02079 հա մակերեսով հողամաս, համաձայն հաստատված հատակագծի:

3. Իջևան համայնքի Գետահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.02079 հա մակերեսքով հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք, Գետահովիտ 10-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 9/1 հողամաս:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ